ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

## ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 7-Ի՝ ՀԵՌԱԿԱ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

**ք. Երևան** **«07» հուլիսի 2023թ.**

Հիմք ընդունելով ՀՀ կրթության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) կառավարման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) աշխատակարգի 19-րդ կետը, և Խորհրդի նախագահի 2023 թվականի հուլիսի 4-ի № 4-Լ որոշումը՝ Տեսչական մարմնի Խորհրդի արտահերթ նիստը որոշվեց անցկացնել հեռակա քվեարկությամբ:

Խորհրդի հեռակա քվեարկությունը սկսվեց 2023 թվականի հուլիսի 7-ին՝ ժամը $9^{00}$-ին և ավարտվեց՝ ժամը $17^{30}$-ին:

Քվեարկությանը մասնակցել են՝

**Խորհրդի նախագահ՝**

Ժ. Անդրեասյան - ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար

**Խորհրդի անդամներ՝**

| | |
|---|---|
| Ա. Դանիելյան | - ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի պարտականությունները կատարող |
| Ռ. Գևորգյան | - ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ |
| Վ. Սիրունյան | - ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ |
| Մ. Թադևոսյան | - «Մասնակցային դպրոց» կրթական ծրագրի հիմնադրամի անդամ |
| Բ. Փափազյան | - «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի խորհրդի անդամ |
| Ա. Բախշյան | - «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության կրթության հարցերով խորհրդական |
| Ա. Հակոբյան | - «Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամի արտաքին կապերի գծով տնօրեն |

Քվեարկությանը չի մասնակցել՝

Լ. Բալյան - ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ

## ՕՐԱԿԱՐԳ

1. Տեսչական մարմնի ռիսկի գնահատման, ստուգումների պլանավորման, վերլուծությունների և գնահատման վարչության գլխավոր մասնագետի (68-27.3-Մ2-4) քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնի անձնագրում լրացում կատարելու մասին:

2. Տեսչական մարմնի հանրության հետ կապերի բաժնի պետի (ծածկագիր՝ 68-27.5-Ղ4-1) պաշտոնի անձնագրում և «մասնագետ» (ծածկագիր՝ 68-27.5-Մ7-1) պաշտոնը «գլխավոր մասնագետ» (ծածկագիր՝ 68-27.5-Մ2-1) պաշտոնով փոխարինելու և դրանում փոփոխություններ կատարելու մասին:

3. Տեսչական մարմնի Խորհրդի 2019 թվականի դեկտեմբերի 27-ի № 2(21)-Լ որոշմամբ հաստատված՝ Տեսչական մարմնի վերահսկողական գործառույթների ընթացքում գործածվող՝ ՀՀ մարզպետարանների և համայնքապետարանների կրթության հարցերով զբաղվող ստորաբաժանումներում իրականացվող վերահսկողական գործառույթների ընթացքում գործածվող ձևաթղթերը ուժը կորցրած ճանաչելու մասին:

4. Տեսչական մարմնի 2023 թվականի 1-ին եռամսյակի գործունեության կատարողականի գնահատման ներկայացում:

Օրակարգային հարցերի քվեարկությանն անհրաժեշտ նյութերն ուղարկվեցին Խորհրդի անդամների էլեկտրոնային փոստի հասցեներին: Քվեարկությունը կայացավ:

**Քվեարկության արդյունքում՝**

1. Ժ. Անդրեասյանը 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ հարցերին քվեարկեց «կողմ»,
2. Ա. Դանիելյանը 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ հարցերին քվեարկեց «կողմ»,
3. Ռ. Գևորգյանը 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ հարցերին քվեարկեց «կողմ»,
4. Վ. Սիրունյանը 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ հարցերին քվեարկեց «կողմ»,
5. Մ. Թադևոսյան 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ հարցերին քվեարկեց «կողմ»,
6. Բ. Փափազյան 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ հարցերին քվեարկեց «կողմ»,
7. Ա. Բախշյանը 1-ին, 2-րդ, 3-րդ հարցերին քվեարկեց «կողմ», 4-րդ հարցին քվեարկեց «դեմ»,
8. Ա. Հակոբյան 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ հարցերին քվեարկեց «կողմ»:

**Քվեարկության արդյունքները՝**

**Հարց 1-ին՝ 8 «կողմ»:**

**Հարց 2-րդ՝ 8 «կողմ»:**

**Հարց 3-րդ՝ 8 «կողմ»:**

**Հարց 4-րդ՝ 7 «կողմ» և 1 «դեմ»:**

Այսպիսով, Խորհրդի հեռակա նիստին մասնակցած 8 անդամներից 8-ը օրակարգի 1-ի, 2-րդ, 3-րդ հարցերին քվեարկեցին «կողմ», 4-րդ հարցը քվեարկեցին 7 «կողմ», 1 «դեմ» ձայների հարաբերակցությամբ: Խորհրդի անդամ Ա. Բախշյանը «դեմ» քվեարկեց 4-րդ հարցին:

Ա. Բախշյանը էլեկտրոնային նամակով առաջարկեց օրակարգի 4-րդ հարցի վերաբերյալ իր ունեցած դիտարկումներին անրադառնալ Խորհրդի հաջորդ առկա նիստին:

**Սույն արձանագրությանը ծանոթանալուց և համաձայնություն տալուց հետո Խորհուրդը որոշեց.**

1. Հավանություն տալ Տեսչական մարմնի ռիսկի գնահատման, ստուգումների պլանավորման, վերլուծությունների և գնահատման վարչության գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 68-27.3-Մ2-4) քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնի անձնագրում լրացում կատարելուն:

2. Հավանություն տալ Տեսչական մարմնի հանրության հետ կապերի բաժնի պետի (ծածկագիր՝ 68-27.5-Ղ4-1) պաշտոնի անձնագրում և «մասնագետ» (ծածկագիր՝ 68-27.5-Մ7-1) պաշտոնը «գլխավոր մասնագետ» (ծածկագիր՝ 68-27.5-Մ2-1) պաշտոնով փոխարինելուն և դրանցում փոփոխություններ կատարելուն:

3. Ուժը կորցրած ճանաչել Տեսչական մարմնի Խորհրդի 2019 թվականի դեկտեմբերի 27-ի № 2(21)-Լ որոշմամբ հաստատված՝ Տեսչական մարմնի վերահսկողական գործառույթների ընթացքում գործածվող՝ ՀՀ մարզպետարանների և համայնքապետարանների կրթության հարցերով զբաղվող ստորաբաժանումներում իրականացվող վերահսկողական գործառույթների ընթացքում գործածվող ձևաթղթերը:

4. Հաստատել Տեսչական մարմնի 2023 թվականի 1-ին եռամսյակի գործունեության կատարողականի գնահատումը:

Recoverable Signature

X

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

**Խորհրդի նախագահ՝** Signed by: ANDREASYAN ZHANNA 6402810169

_____ **Ժ. Անդրեասյան**

ստորագրություն

**Խորհրդի քարտուղար՝**

_____ **Ա. Գևորգյան**

ստորագրություն